## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«29» «մարտի» 2024 թ. № 101-Ա

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 7-Ի N 3-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի N 440-Լ հրամանի հավելվածի 16-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հունվարի 7-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 483-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3-Ա հրամանը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/29/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«29» մարտի 2024թ.

ք. Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի մարտի «29»-ի
N 101- Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի

| | |
|---|---|
| Սերգո Աթանեսյան | շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար, խորհրդի նախագահ, |
| Արկադի Խաչատրյան | շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ, |
| Վիգեն Չիլինգարյան | շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի խորհրդական, |
| Լուսինե Ավետիսյան | շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ, |
| Ոսկեհատ Գրիգորյան | շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ, |
| Արմինե Հովհաննիսյան | շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության պետի տեղակալ, |
| Սամվել Ժամհարյան | շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի ղեկավար: |